ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-21/2

ք. Երևան «28» 10 2021թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանի, ով գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հիպերնովա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ալեքսանդր Ալեքսանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 40 աշխատանքային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում կից ներկայացված փաստաթղթերով՝ գծագրերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և

ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում ընթացիկ նորոգման համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել ընթացիկ նորոգման համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 38000000 (երեսունութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	<<Հիպերնովա>> ՍՊԸ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	ՀՀ ք. Երևան Գարեգին Նժդեհի 17, 33 տ
ՀՎՀՀ **00008519**	Հ/Հ 2500010735690100
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ **900011020089**	ՀՎՀՀ 00924152
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն Ա. Ալեքսանյան
ղեկավար–գլխավոր քարտուղար	
Վ. Նարիբեկյան	
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«28» 10 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՀՀ Ազգային ժողովի ավտոտնտեսության 3-րդ հարկի, տանիքի, նկուղի, նկուղային արհեստանոցի և աստիճանավանդակի, ավտոտնտեսության երեք կողմի տարածքի և նույն հատվածի բենզինի պահեստի վերանորոգման աշխատանքների

Հ/Հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանում	Չափման միավոր	Քանակը	Միավորի գին	Գումար	Գումարը տոկոս ներով
Ա		**3-րդ հարկի վերանորոգում (բացի պատուհանից) S=560ք/մ**					
1	14-423 K=1.1 E15-661 ՀՀ ֆին. նախ. հրաման 06.2021թ, կետ 438	Սյուները և գլխավոր հեծանները մաքրել քայքայված ցեմենտավազային սվաղից ցանցի հետ միասին, ամրացնել նոր մետաղական ցանց 50*50 մետաղական հյուսվածք «Ռաբիցա»: Սվաղել ցեմենտային շաղախով 1:2 հարաբերակցությամբ բերել ուղղանկյուն տեսքի (ա. ծանր ավազ, բ. ցեմենտ M-400): Առաջացած շին աղբը տեղափոխել 154 մ վրա, կրկնակի ներկել ճակատային լատեքսային ներկով մածկումից հետո գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ	ք/մ	330	5.432	1792.453	6
2	E15-587 E15-664	Պատերը և առաստաղը հեծանների հետ միասին մաքրել սևացած և քայքայված գաջի սվաղից և ներկերից: Մածկել և կրկնակի ներկել ճակատային լատեքսային ներկով, հատակից 1.5մ բարձրությամբ ներկել յուղաներկով: Գույները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	ք/մ	743	2.935	2180.818	7.3
3	15-23-88 23-228 Ա-3 Շուկա	Հատակի քայքայված ասֆալտբետոնե շերտի մաքրում (փբեɜ) 15-30մմ հաստությամբ, առաջացած աղբը տեղափոխել 154մ (560ք/մ*0.03) 2.4տ	տ	40	4.481	179.245	0.6
4	27-164-2 ֆին. նախ. հրաման 2021	Նոր մանրահատիկ ասֆալտ բետոնի շերտի տեղադրում 40մմ «Վ» տիպի՝ պահպանելով ջրահեռացման ուղիները (200մմ*100մմ չափեր)	ք/մ	560	4.118	2306.289	7.72
5	Ֆին. նախ. հրաման 2021 կետ 1843	Բիտումի լցաբաշխում լցաբաշխում 100 ք/մ համար 4տ, 560ք/մ համար 2տ	տ	2	215.094	430.189	1.44
Բ		**Տանիքի վերանորոգում (37մ*35մ չափերի)**					
1	E12-403	Կավարամածի կոտրված փայտերի փոխարինում նորերով (մ=նույնը տեղադրվածի), թիթեղի տեղադրում և 1350ք/մ*9.5% մ=0.5մմ: Դուրս եկած նախկին մեխերի փոխարեն ամբողջ մակերեսն ամրացնել ինքնածգվող շուռուպներով	ք/մ	168	6.402	1075.472	3.6

2	Р8-109 Շուկա	Կոտրված, ծակված, չգործող ջրհորդանների փոխարինում նորերով մ=160, ջրընդունիչ ձագարով կառնիզի առկայության դեպքում, տեղադրելով հատուկ տաքացուցիչ սպիրալներ՝ յուրաքանչյուրի համար 18մ 29600+157300	հատ	9	211.443	1902.987	6.37
3		Մետաղական սյուները, հեծանները և փայտի կավարամածը ներկել, մաքրել և կրկնակի ներկել ճնշման տակ հրապաշտպանիչ խառնուրդ լուծույթով. 1ք/մ-ի համար. ա) ամիակ 230 գրամ բ) սուլֆադ 60 գրամ գ) կերոսին 300 գրամ 1300 ք/մ * 1.25 = 1600 ք/մ	ք/մ	1600	0.429	687.107	2.3
		Առավելագուն բարձրությունը 4մ, ցածր մասում՝ 0.6մ Էլեկտրական հաղորդալարերի 2*1.5մմ/ քառ. անցկացնել 4 ուղղություններով 4*56մ ВВГНГ պղնձե ճաղերով 16 հատ LED լամպ և 2 հատ անջատիչ	ք/մ	1200	0.075	89.623	0.3
Գ	**Նկուղային հարկի վերանորոգում (1.9մ խորությամբ, 3մ*7.5մ չափերի)**						
1	Շուկա -+-	Հատակի վրա շահագործվող բացվածքի (3մ*7.5մ և 1.9մ խորությամբ) նախկին տեղադրված մետաղական կոնստրուկցիաները ապամոնտաժել ա) 1-ին դվուխտավր N26 բ) L 75X գ) C N18 դ) աստիճան (լավ վիճակի) հանձնել շահագործման բաժին	գծ/մ գծ/մ գծ/մ մ	12 24 4 2.5	5.228	62.736	0.21
2	ՀՀ ֆին. նախ. 06.2021 Կետ 166	Պատերի վրայի բետոնը մաքրել ստեղծել հավաքովի (СЖБ) երկաթ-բետոնի հենարան /տես էսքիզ-գծագիր/ 7.5մ*2 Երկաթբետոնե սալի տեղադրում շաղախի վրա (5 մմ) «Մ-300», 2.8 մ լայնությամբ 7.5մ երկարությամբ՝ 7 հատ 1 մ * 2.8 մ 15գծ/մ * 0.18 մ	գծ/մ խոր/մ	15 2.9	133.919	388.365	1.3
3	27-164-2	Նոր մանրահատիկ ասֆալտբետոնի շերտի տեղադրում 30մմ հաստությամբ ջրահեռացման ուղուց դրսի պատ 8մ*13մ «Վ» տիպի	ք/մ	104	3.734	388.365	1.3
Դ	**Նկուղային հարկում արհեստանոցի վերանորոգում**						
1	с-310-13 Ա-3 Շուկա	Նախկին լոգարանը (այժմ չի գործում) և հարակից սենյակները մաքրել աղբից, որոշ տեղերում քանդել քայքայված միջնորմային պատերը: Առաջացած աղբը տեղափոխել ձեռքով 50 մ, լցնել ավտոմեքենայի մեջ տեղափոխել 154 մ	տ	30	2.987	89.623	0.3

2	Р11-225	Պատերը և առաստաղը մաքրել քայքայված գաջի և ցանկապատային սվաղները: Առաջացած աղբը տեղափոխել ձեռքով 50 մ	քմ	450	0.797	358.491	1.2
3	Ֆին. նախ. հրաման 06.2021 կետ 553	Նախկինում տեղադրված, շահագործման համար ոչ պիտանի, կոտրված դռները փոխարինել նոր ալյումինե դռներով փականներով 0.8 մ * 2.1 մ չափերի	քմ	6.8	35.146	238.994	0.8
4	Е15-661	Պատերը և առաստաղները ներկել ճակատային լատեքսային ներկով, լավ որակի ծեփածածկումով	քմ	450	1.328	597.484	2
5	Е15-257 Е15-262	Պատերը հատակից 1.5 մ բարձրությամբ սվաղել ցեմենտ ավազային սվաղով, մածկել և կրկնակի ներկել յուղաներկով 1650դր + 1430դր	քմ	115	3.377	388.365	1.3
6	8-149-1	Փոխել բոլոր լուսավորության հաղորդալարերը ВВГНГ 3*2.5 քառ. մմ	գծ/մ	475	0.692	328.616	1.1
7	8-591-10	Տեղադրել վարդակներ (4+4)	հատ	8	1.867	14.937	0.05
8		Ավտոմատ անջատիչներ 380Վ 50Ա	հատ	2	7.469	14.937	0.05
Ե	**Աստիճանավանդակի վերանորոգում**						
1	Р11-225	Պատերը և առաստաղները մաքրել սևացած-քայքայված ներկերից: Գաջի սվաղից առաջացած աղբը տեղափոխել 50 մ ձեռքով	քմ	490	0.793	388.365	1.3
2	Е15-664	Մաքրած մակերեսը մածիկապատել և կրկնակի ներկել ճակատային լվացվող բարձրորակ ներկով	քմ	490	2.561	1254.717	4.2
3	8-149-1	Փոխել լուսավորության հաղորդալարերը ВВГНГ 3*2.5 քառ. մմ	գծ/մ	75	0.398	29.874	0.1
4	8-591-7	Տեղադրել վարդակներ	հատ	8	5.601	44.811	0.15
5	8-591-7 Ֆին. նախ. հրաման կետ 559	Երկրորդ հարկից մուտք աստիճանավանդակ նախկին տեղադրված կոտրված փայտե դուռը 0.9մ*2.3մ փոխարինել նոր մետաղապլաստե դռնով (կաղնեգույն, փականով, 60մմ հաստության, վերևից 50 սմ ապակի)	քմ	2.1	14.226	29.874	0.1
6	Ֆին. նախ. հրաման կետ 554	Ալյումինի դուռ երկփեղկանի 1.32մ * 2.3մ (h) (խրամուգը (храмок) ապակի 1.32մ * 0.5մ)	քմ	4	52.280	209.119	0.7
7	Е8-194	Ներքին փայտամած աստիճանավանդակում աշխատանքների կատարման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները	քմ	65	0.460	29.874	0.1

8	E15-257 E15-262 Շուկա	Աստիճանավանդակի մեջ երևացող առաստաղի հեծանները մաքրել քայքայված գաջից և սևացած ներկից, վերականգնել քայքայված մասերը, մածկել ամբողջ մակերեսը և կրկնակի ներկել լատեքսային ներկով, նախապես հեծանները բերել ուղղանկուն տեսքի նեղվածության պայմաններում 1650+1430	ք/մ	28	1.280	35.849	0.12
		Աստիճանների մետաղական թեքանները ցանկապատել 50*50 գործվածքով, սվաղել ցեմետավազային սվաղով, մածկել և ներկել լատեքսային ներկով	ք/մ	6.5	5.515	35.849	0.12
9	E15-614	Աստիճանավանդակի ճաղաշարերի յուղաներկում 2 շերտ	ք/մ	32	0.934	29.874	0.1
		Աստիճանավանդակում և նշված սենյակներում տեղադրել LED լամպեր 10 Վտ ip54	հատ	10	14.937	149.371	0.5
2		**Ավտոտնտեսության երեք կողմի տարածքի վերանորոգում**					
1	Շուկա 27-36 5-135	Երեսպատված հենապատի (բազալտի սալիկներով) անցումային պատի կողմից բարձրությունը 0.6մ, պատուհանների կողմից բարձրությունը 1.6մ, ամբողջ երկարությունը պատի գլխադիրների հետ միասին 22մ: Հանել բազալտի գլխադիրները, վերատեղադրել նոր ցեմենտավազային շաղախի վրա՝ փոխարինելով 3 հատ կոտրված գլխադիրները նմանատիպ նախկինով: Հարթեցնոց սարքով երկու կողմից մաքրել ամբողջ մակերեսը 22մ*0.6մ (h) + 22մ*1.6 (h)	ք/մ	65	5.515	358.491	1.2
2	E1-721	Քարից ցանկապատի և ավտոտնտեսության հետնամասի 46մ երկարությամբ, 7.5մ լայնությամբ և ≈0.6մ բարձրությամբ մակերեսը մաքրել աղբից, լցնել ավտոմեքենայի մեջ, կուտակված բազալտի քարերը ձեռքով տեղափոխել պատվիրատուի կողմից հատկացված տեղ 46*7.5*0.64 (h)	խ/մ	221	1.622	358.491	1.2
3	E1-961	Նույնը ձեռքով	խ/մ	82	2.186	179.245	0.6
4	48-170 48-216 c-3 1-723	Բարձած շին աղբը տեղափոխել 154 մ վրա	տ	368	2.435	896.226	3
5	27-36 5-135	Տնտեսական մուտքի մոտի բազալտի աստիչանները հանել և վերատեղադրել նոր ցեմենտավազային շաղախի վրա	գծ/մ	8	3.734	29.874	0.1
6	Շուկա	Նույն մասում անձրևատար ուղին վերանորոգել, վրան տեղադրել նմանատիպ մետաղական ցանց	գծ/մ	5	23.899	119.497	0.4
7	23-109 Շուկա	8 դիտահորերի և ջերմային կամերայի վերանորոգում (պատերը, հատակը և ծածկը): Անհրաժեշտության դեպքում փոխել որոշ փուգունի մտոցները	հատ	9	39.832	358.491	1.2

8	E6-133	Հետնամասի մուտքի դռան դիմացի քայքայված բետոնի պատի տեղում կառուցել նոր պատ ԲՄ-200 6մ երկարությամբ, 0.8մ բարձրությամբ, 200 մմ պատերի հաստությամբ՝ երկու բետոնի աստիճանով	խ/մ	2.3	51.955	119.497	0.4
9	27-33 c-3 Շուկա	Քայքայված ասֆալտբետոնե շերտը 20-30 մմ հաստությամբ (փբեզ) մաքրել լցնել	ք/մ	1680	2.027	3405.660	11.4
10	E-27-164-2	Մանրահատկի ասֆալտբետոնի շերտի իրականացում 40 մմ հաստությամբ 2925+975	ք/մ	1680	4.357	7319.182	24.5
Է		**Ավտոտնտեսության բենզինի պահեստի քանդում 12մ*3մ չափերի**					
1	46-77	Երկաթբետոնի միաձույլ, քայքայված ծածկի քանդում ձեռքի էլեկտրական հորատիչ մուրճով	խ/մ	5.5	21.727	119.497	0.4
2	46-84	Բետոնի պատի քանդում ձեռքի հորատիչ մուրճով 3 մ երկարությամբ, 0.5 մ լայնությամբ և 0.3 մ բարձրությամբ 3մ*5մ*0.3մ (h)	խ/մ	2	1.494	2.987	0.01
3	Շուկա	≈8 տ տարողությամբ մետաղական երկու բաքի ապամոնտաժում և տեղափոխում	հատ	2	50.786	101.572	0.34
4	46-84	Քարից պատի քանդում (12մ+3մ+3մ) 2.6 մ (h), 0.4 մ հաստությամբ	խ/մ	20	4.481	89.623	0.3
5	46-77	Բետոնից հիմքի քանդում ձեռքի հորատիչ մուրճով 18մ*0.5 լայնք*0.8 խորություն	խ/մ	7.2	20.746	149.371	0.5
6	Շուկա	Միջնորմային պատի քանդում 200 մմ լայնությամբ, 9 մ երկարությամբ և 2.4 մ բարձրությամբ	ք/մ	22	2.716	59.748	0.2
7	23-77 23-229 310-12 Ա-3	Առաջացած աղբի բարձում ավտոմեքենա և տեղափոխում 18 մ (5.5+2+20+7.2+22+0.2) 39*2.1տ	տ	82	5.538	454.088	1.52
		Ընդամենը				**29874.214**	**100**
		Չնախատեսված ծախսեր 6 % (որից 3 %-ը կատարողին)				1792.453	
		Ընդամենը				**31666.667**	
		ԱԱՀ 20 %				6333.333	
		ԸՆԴԱՄԵՆԸ				**38000000**	
միավորի արժեքների մեջ ներառված են վերադիր ծախսերը 13.3%							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. **19**
ՀՎՀՀ **00008519**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ **900011020089**
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար–գլխավոր քարտուղար
Վ. Նարիբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Հիպերնովա>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Գարեգին Նժդեհի 17, 33 տ
Հ/Հ 2500010735690100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00924152
Տնօրեն Ա. Ալեքսանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 28 » 10 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱԺ ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 3-ՐԴ ՀԱՐԿԻ, ՏԱՆԻՔԻ, ՆԿՈՒՂԻ, ՆԿՈՒՂԱՅԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻ, ԱՎՏՈՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԿՈՂՄԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ ԱԺ ավտոտնտեսության 3-րդ հարկի, տանիքի, նկուղի, նկուղային արհեստանոցի և աստիճանավանդակի, ավտոտնտեսության երեք կողմի տարածքի վերանորոգման	համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	համաձայնագիրն՝ ուժի մեջ մտնելուց 40-րդ աշխատանքային օրը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. **19**
ՀՎՀՀ **00008519**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ **900011020089**
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար–գլխավոր քարտուղար
Վ. Նարիբեկյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Հիպերնովա>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան Գարեգին Նժդեհի 17, 33 տ
Հ/Հ 2500010735690100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00924152

Տնօրեն Ա. Ալեքսանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
« 28 » 10 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«28» 10 2021թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն